ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր **07/09/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Ռուզաննա Ավդալյանը, Կարեն Բաղդասարյանը, Տաթեվիկ Գասպարյանը, Վիգեն Գրիգորյանը, Նարինե Խաչատրյանը, Վահան Ստեփանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նաթելլա Մուրադյան, Սամվել Շահբազյան, Արմեն Շահբազյան, Արթուր Հովհաննիսյան, Հովիկ Մարկոսյան, Պետրոս Դումիկյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը

Նիստը արձանագրում էր ՝ ը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65- րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 9-ին արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը 2024 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին,
2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հողային

հաշվեկշիռը հաստատելու մասին,

3.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Միխայլովկա բնակավայրի վարչական տարածքում «Ռաֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Միխայլովկա բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,

4.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի վարչական տարածքում «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ 15,5373 հա մակերեսով հողամասում 2 ծածկարանների կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,

5.«Օլդսթուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Սարատովկայի բազալտի հանքավայրում օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,

6.Ընդեքօգտագործման իրավունք ունեցող «Քարալեռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն 2024 թվականի բյուջեի կատարաման առաջին եռամսյակի ընթացքի մասին Հայասատանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշումով հաստատված կարգի 7-րդ, 9-րդ կետերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն հավելված NN1,2 :

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԽԱՅԼՈՎԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՌԱՖ ՕՋԱԽ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻԽԱՅԼՈՎԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 17.06.2024-ի «Ռաֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կողմից Միխայլովկա բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Ռաֆ Օջախ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Միխայլովկա բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԲՈԶՈՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ ԳՈՐԾԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ 15,5373 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ 2 ԾԱԾԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով « Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 19.06.2024-ի «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ 15,5373 հա մակերեսով հողամասում 2 ծածկարանների կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Բոզոյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործանական նշանակությամբ 15,5373 հա մակերեսով հողամասում 2 ծածկարանների կառուցման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին
«ՕԼԴՍԹՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍԱՐԱՏՈՎԿԱՅԻ ԲԱԶԱԼՏԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով « Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 20.06.2024-ի «Օլդսթուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության կողմից կողմից Սարատովկայի բազալտի հանքավայրում օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Օլդսթուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփականության կողմից կողմից Սարատովկայի բազալտի հանքավայրում օգտակար հանածոյի հանքարդյունահանման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին
ԸՆԴԵՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆ ՔՈՒՆԵՑՈՂ «ՔԱՐԱԼԵՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության N286 որոշումով հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թույլտվություն № ՇԱԹ -29/700 (տրված 27.03.2024-ին,)

Տաշիր համայնքի ավագանին որոշում է ՝

1. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա, թիվ 1/1 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օգտագործման համարտր տամադրված ընդերքի 0.05449 հա մակերեսով (կադաստրայիան ծածկագիր՝ 06-099-0207-0028) առանց մրցույթի, վարձակալության իրավունքով, 20 տարի ժամկետով, տրամադրել «Քարալեռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տարեկան 2000 (երկու հազար) ՀՀ դրամ վարձավճարով:

2. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա, թիվ 4 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օգտագործման համարտր տամադրված ընդերքի 0.0842 հա մակերեսով (կադաստրայիան ծածկագիր՝ 06-099-0207-0030) առանց մրցույթի , վարձակալության իրավունքով, 20 տարի ժամկետով, տրամադրել «Քարալեռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տարեկան 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով:

3. Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա,7-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օգտագործման համարտր տամադրված ընդերքի 1,12319 հա մակերեսով (կադաստրայիան ծածկագիր՝ 06-099-0207-0019) առանց մրցույթի , վարձակալության իրավունքով, 20 տարի ժամկետով, տրամադրել «Քարալեռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ տարեկան 29000 (քսանինը հազար) ՀՀ դրամ վարձավճարով:

4. «Քարալեռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման:

5. Վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Ավագանու անդամներ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Ջ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ի. ՏՈՄԵՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Նունե Սոլոյանը _____